7.	Բարեգործություն ստանալու օրերը	60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Երիտասարդ զույգեր համայնքներից 15-23 տարեկան երիտասարդներ
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015 Հունիս 1-ից – 2016 Հունիս 30 Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝ 1. Բնական աղետների առումով խոցելի ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի համայնքների աղետներին դիմակայունության բարձրացում 2. ՄԻԱՎ/ԶԻԱՀ վերաբերյալ տեղեկատվության տարածում և 15-23 տարեկան երիտասարդների և երիտասարդ զույգերի շրջանում իրազեկվածության բարձրացում 3. ՏԱՆ (Տարածաշրջանային Առողջապահական նախաձեռնության) գործունեության արդյունավետ և պատասխանատու ելքի ապահովում Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝

Ակնկալվող արդյունք 1


1.1 Բարձրացնել խոցելի համայնքների բնակչության իրազեկվածությունը բնական աղետներին հաջորդող ջրային վարակների փոխանցման և կանխարգելման վերաբերյալ, ներառյալ սեմինարների իրականացում ՀԿԽԸ կամավորների (20 հոգի) և համայնքների ներկայացուցիչների (260 հոգի) համար, սեմինարների ընթացքում մասնակիցների սննդի ապահովում, տեղեկատվական նյութերի տպագրություն և սեմինարների կազմակերպման համար գրասենյակային անհրաժեշտ պարագաների ձեռք բերում, ժամանակահատվածը՝ 2015թ. սեպտեմբերի 1-ից – 2016թ. մայիսի 30-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 12360 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1.2 Բարձրացնել խոցելի համայնքների բնակչության իրազեկվածությունը բնական աղետներին հաջորդող օդա-կաթիլային վարակների փոխանցման և կանխարգելման վերաբերյալ ներառյալ սեմինարների իրականացում ՀԿԽԸ կամավորների (20 հոգի) և համայնքների ներկայացուցիչների (260 հոգի) համար, սեմինարների ընթացքում մասնակիցների սննդի ապահովում, տեղեկատվական նյութերի տպագրություն և սեմինարների կազմակերպման համար գրասենյակային անհրաժեշտ պարագաների ձեռք բերում, ժամանակահատվածը՝ 2015թ. հոկտեմբերի 1-ից – 2016թ. հունիսի 30-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 12000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

10/6

Ակնկալվող արդյունք 2

2.1 Բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման միջոցների վերաբերյալ: Իրազեկվածության բարձրացմանը ուղղված սեմինարների կազմակերպում ինչպես երիտասարդների, այնպես էլ բուհերի և քոլեջների դասախոսների համար, սեմինարների ընթացքում մասնակիցների սննդի ապահովում, տեղեկատվական նյութերի տպագրություն, սեմինարների կազմակերպման համար գրասենյակային անհրաժեշտ պարագաների ձեռք բերում: Ժամանակահատվածը՝ 2015թ. օգոստոսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 7800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

2.2 Ծրագրի շահառուների շրջանում ստեղծել համապատասխան վերաբերմունք ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց վերաբերյալ՝ լայնածավալ հանրային միջոցառումների կազմակերպման միջոցով, ժամանակահատվածը՝ 2015թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը:


Ընդհանուր արժողությունը՝ 6991 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Ակնկալվող արդյունք 3


3.1 Բարելավել ծրագրի շրջանակներում կամավորների ղեկավարումը՝ կամավորների հետ պարբերաբար հանդիպումների, առավել ակտիվ կամավորներին խրախուսական նվերների բաշխման միջոցով: Ծրագրի անձնակազմի՝ ՀՀ-ում և արտերկրում հանդիպումներին ու սեմինարներին մասնակցություն, ժամանակահատվածը՝ 2015թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի

10/6

		30-ը: Ընդհանուր արժողությունը՝ 8440 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 3.2 Բարձրացնել երիտասարդների հանրային ակտիվությունը՝ ԼԻՄՎ-ի և աղետներին հաջորդող հնարավոր վարակային հիվանդությունների դեմ պայքարում, խթանել նրանց մասնակցությունը հանրային միջոցառումներին, կազմակերպել սեմինարներ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում, ժամանակահատվածը՝ 2015թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը: Ընդհանուր արժողությունը՝ 5520 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: 4.1 Կազմակերպչական և պահպանման ծախսերը՝ 6889 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ արժողությամբ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները հիմնականում կրթական, իրազեկման և խորհրդատվական են, ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և պատրաստել կրթական և իրազեկման նյութ՝ 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, հանդիպումների և կրթական միջոցառումների ընթացքում մասնակիցների սննդի ապահովում 13280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, գրասենյակային անհրաժեշտ պարագաների ձեռք բերում 9280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, կամավորների և աշխատակազմի ճանապարհածախսերի ապահովում 8400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ծրագրի շրջանակներում հանրային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ պարագաների ձեռք բերում և վարձակալություն 4991 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ծրագրի կառավարման և իրականացման վերաբերյալ ակտիվ կամավորների և



		աշխատակազմի համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում ուսուցողական դասընթացների համար նախատեսված գործուղման ծախսերի և ընդհանուր արժողությունը 10120 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, նախատեսվում է նաև ակտիվ կամավորների հետ պարբերաբար հանդիպումներ և խրախուսական նվերների ձեռք բերում 3840 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժեքով և պահպանականների ձեռք բերում թվով 12000 հատ, 600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, աշխատակազմի և ակտիվ կամավորների հաղորդակցման համար հեռախոսի լիցքավորման քարտերի ձեռք բերում 600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2014թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, կազմում են 6889 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դրանք ներառում են ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվում է կրթական հաստատությունների հետ ամիջական համագործակցությամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ամերիկյան Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների ամիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ ըստ սահմանված կարգի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 917 - Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 07/80-2/20228-15 և հուլիսի 31-ի N 06/5-1/20454-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդափոխության սարքավորման (14 տեղ, 3,260 կգ ընդհանուր քաշով, 44,766 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,650,480 դրամ, «ՄՃՓ» ՏՍ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էօրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 918 - Ա
քաղ. Երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 18-ի N 07/80-2/22074-15 և N 06/5-1/22094-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (935 տեղ, 23,131 կգ ընդհանուր քաշով, 39,206.99 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:


2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 919 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 18-ի N 07/80-2/22134-15 և օգոստոսի 19-ի N 06/5-1/22292-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Դիդիգյանի կողմից ուղարկված, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված կահույքի (266 տեղ, 7,320 կգ ընդհանուր քաշով, 31,743.04 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,289,100 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 920 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 19-ի N 07/80-2/22154-15 և N 06/5-1/22302-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հայկ Դիդիզյանի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված կահույքի (126 տեղ, 2,119 կգ ընդհանուր քաշով, 15,089.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,411,400 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:
2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 921 - Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 20-ի N 07/80-2/22417-15 և օգոստոսի -ի N 06/5-1/22748-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված տպագրական մեքենայի դետալների (75 կգ ընդհանուր քաշով, 12,698.97 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 922 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 07/80-2/20884-15 և օգոստոսի 10-ի N 06/5-1/21284-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (930 տեղ, 22,900 կգ ընդհանուր քաշով, 38,812.55 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 923 - Ա
քաղ. երևան


ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 6)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 07/80-2/20230-15 և հուլիսի 31-ի N 06/5-1/20461-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված կանացի հագուստի (մեկ տեղ, 300 կգ ընդհանուր քաշով, 44,258 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական ծառայության կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 924 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԻ ՄԻԱՎՈՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅԿԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 31-ի N 07/80-2/20434-15 և օգոստոսի 4-ի N 06/5-1/20708-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի իրանի իսլամական Հանրապետության Թեհրանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի կողմից «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հազուստի և խաղալիքների (31 տեղ, 400 կգ ընդհանուր քաշով, 250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 100 ԱՄՆ-ի դոլար, մասնացուցակը կցվում է, «Սյունիքի» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արցախի սոցիալապես անապահով ընտանիքներին և ՀՀ-ի «Սոսե» մանկապարտեզի երեխաների համար:

2. «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումը ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումով որոշվելիք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ԾՄՍ ԱՂԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԴՈՅՆՔԻ ԾՐԱԳՐԻ
ARMENIAN RELIEF SOCIETY ARTSAXH REGION

07 հուլիս, 2015թ.

Մասնացուցակ N 1

	Կապոցի եռ.	Բովանդակություն
1	1բ	Մանկական Հանդեսի շոր(օգտագործված)- փափուկ խաղալիք(նոր)(2 կապոց մեկտեղ)
2	3բ	Մանկական հագուստ(օգտագործված)- Փափուկ խաղալիք(նոր)(2 կապոց մեկտեղ)
3	4բ	Բարեկենդ. pack մանկական Հագուստ(նոր) - պարի շորեր սև գույնի 12հատ (օգտագործված) (2 կապոց մեկտեղ)
4	7բ	Բարեկենդանի pack մանկ. Հագուստ(նոր) - մանկական Հագուստ (օգտագործված) (2 կապոց մեկտեղ)
5	9բ	Բարեկենդանի pack մանկ. Հագուստ(նոր)- փափուկ խաղալիք (2 կապոց մեկտեղ)
6	10բ	Մանկական Տարեդարձի celebrity ապրանքներ(նոր) - մեծի հագուստ (օգտագործված) - (2 կապոց մեկտեղ)
7	11բ	Բարեկենդանի pack մանկ. հագուստ(նոր) -մեծի հագ. (օգտագործված)-(2 կապոց մեկտեղ)
8	18բ	Խաղալիքներ-մանկական. Հագուստ(նոր) -(2 կապոց մեկտեղ)
9	20բ	Մեծի հագուստ(օգտագործված)- (տեղական հագ. (օգտագործված)-(2 կապոց մեկտեղ)
10	21բ	Մանկական Հանդեսի շոր(օգտագործված)- (փափուկ խաղալիքներ(նոր) (2 կապոց մեկտեղ)
11	22բ	Մանկական Տարեդարձի ապրանքներ(նոր) -խաղալիք(նոր) (2 կապոց մեկտեղ)
12	24բ	Խաղալիքներ(նոր)-մանկ. հագ. և մեծի հագ.խաղ(օգտագործված)- (2 կապոց մեկտեղ)
13	187	Չմեռ. Քափշեններ մեծի(օգտագործված)-(մեկ կապոց)
14	182	մանր խաղալիք (օգտագործված)-(մեկ կապոց)
15	183	փափուկ խաղալիքներ. (նոր)-(մեկ կապոց)
16	184	տղ. Շապկի տաբատ (օգտագործված)-(մեկ կապոց)
17	180	Մեծի ձմեռ. Հագուստ (օգտագործված)-(մեկ կապոց)
18	177	6 pack խաղալիք,մեքենայ (նոր)
19	178	6 pack խաղալիք,մեքենայ (նոր)
20	173	4 pack խաղալիք մեքենայ (նոր), մեծի հագուստ(օգտագործված)
21	174	4pack խաղալիք մեքենայ (նոր), մանկական. Հագուստ(օգտագործված)
22	161	Մեծի հագուստ ձմեռ. (օգտագործված) (մեկ կապոց)
23	153	Մեծի հագուստ,արջուկ,... (օգտագործված) (մեկ կապոց)
24	113	Մեծի հագուստ ձմեռային(օգտագործված) (մեկ կապոց)
25	101	Մեծի հագուստ ձմեռային(օգտագործված) (մեկ կապոց)
26	69	մեծի տաք հագուստ (օգտագործված) (մեկ կապոց)
27	66	Տղամարդու Տաբատ (օգտագործված) (մեկ կապոց)
28	64	Հագուստ ձմեռային(օգտագործված)-(մեկ կապոց)
29	127	Մեծի հագուստ ձմեռային(օգտագործված)-(մեկ կապոց)
30	188	կոստում տաբատ(օգտագործված) (մեկ կապոց)
31	26	Մանկական հագ. խաղալիք... (օգտագործված)-(մեկ կապոց)





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 925 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 5-ի N 07/80-2/20858-15 և օգոստոսի 4-ի N 03/3-3/20758-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունին զգալի նշանակություն՝

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի հունվարի 21-ին կնքված՝ N 116483848 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը շարժական խեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 926 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի
ոփսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 26-ի N 07/80 2/23089-15 և օգոստոսի 25-ի N 06/3-3/22964-15 եզրակացությունները, որոշում է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ոփսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Կենսաավտանգության կենսաապահովության կարողությունների հզորացում» ծրագրի մասին» N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը:

2. Սահմանել, որ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ոփսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ոփսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Կենսաանվտանգության և կենսաապահովության կարողությունների հզորացում» N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


«Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2015 թվականի օգոստոսի 12-ին կնքված՝ N ՍԱԳԿ-15/1 ՇՀԱՊՁԲ-15/16-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարում՝ 8,891,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

«Իմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00650292) 2015 թվականի օգոստոսի 12-ին կնքված՝ N ՍԱԳԿ-15/1-ՇՀԱՊՁԲ-15/16-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարում՝ 13,550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 927 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 20-ի N 07/80-2/22416-15 և օգոստոսի 19-ի N 06/5-1/22296-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի օգոստոսի 25-ի N 03/07-1/9562-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 20-ի N ԱՄ/22.2/9716-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայի Վեսթմինսթերի համալսարանի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (բժշկական սարքավորում, 1 տեղ, 75 կգ ընդհանուր քաշով, 24,900 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 593.05 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:


2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 928 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 28-ի N 07/80-2/19939-15 և հուլիսի 29-ի N 06/5-1/201116-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հուլիսի 27-ի N ԱՄ/22.2/8778-15 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր ախտորոշիչ թեստեր՝ 2 տեղ, 77 կգ ընդհանուր քաշով, 50 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 458,400 դրամ, ՄՓ և ՍԱՓԱՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ - 929 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱՔՈՒԺԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 7-ի N 07/80-2/21078-15 և օգոստոսի 12-ի N 03/5-1/21471-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 10-ի N ԱՄ/22.2/9278-15 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել Իտալիայից անհատ բարերար Լարիսա Նադիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալյանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված դեղի և բժշկական պարագաների (2 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 2,722.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալյանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 930-Ա
քաղ. երևան

**ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ (WWF-Armenia) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՐԱ-
ՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ (ՀԱՅԱՍՏԱՆ) ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՄՈԴԵԼՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 31-ի N 07/80-2/20336-15 ու հուլիսի 27-ի N 06/3-3/19788-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հուլիսի 18-ի N 02/14/8654-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 22-ի N 1/02.3/6649-15 ու Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի մայիսի 20-ի N 1/08.1/11052-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) (ՀՀ, քաղ. Երևան, Լյուքսեմբուրգի 7, բն. 19, ՀՎՀՀ՝ 00861992) կողմից իրականացվող՝ 561,849 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագիրը (կցվում է):


3. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Սյունիքի ու Վայոց ձորի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Հարավային Գոլկասի (Հայաստան) Էկոլոգիական միջանցքներում
կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գեիշիկ (Մոզրով), Տաթև, Տաճատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ վատակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման
3. Բարեգործը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ), Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Այ՝ Սփորտպլաշ 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա) Հեռ՝ +49 6188 99560 և WWF-Գերմանիա: Հասցե՝ Reinhardtstraße 18 10117 Berlin, Germany (Ռեինհարդտշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա) Հեռ՝ +49 30 31 17 77 0 +49 30 31 17 77 199
4. Ծրագիրը կատարողը	Քննության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան) ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 72, բն. 19 (իրավ.) ք. Երևան, Պողոթյան 11 (գործ.) ՀՎՀՀ՝ 00861992 Հեռ՝ +374 10 58 89 83 +374 10 54 61 56 Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org




2


5. Ծրագրի իրականացման նպատակը	Վայոց Ձորի մարզի Գեիշիկ պահպանվող լանդշաֆտ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ: Քննադատված՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում		
6. Ծրագրի բյուջեն	494,021 (չորս հարյուր ինսուսչորս հազար քսան մեկ) Եվրո:		
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գեիշիկ (Մոզրով), Տաթև, Տաճատափ և Սվարանց համայնքները		
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01.06.2015-31.12.2017		
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի բաղադրիչների գործողությունները	Ժամկետներ	Արժույթը Եվրոյով
	1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրազդրում	հունվար 2015 - հոկտեմբեր 2015	18,211
	2. հողօգտագործման պլանի մշակում	հոկտեմբեր 2015-դեկտեմբեր 2015	13,068
	3. «Մատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրազդրում	հունիս 2015 - դեկտեմբեր 2015	3,267
	4. «Մատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում	հունիս 2015-սեպտեմբեր 2015	20,364
	5. Թիրախային համայնքներում արտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրազդրում	հունիս 2016 - հոկտեմբեր 2016	11,543
	6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում	նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2016	3,054
	7. «Տաթևի» և «Գեիշիկի» պահպանվող տարածքներում պահպանվող տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրազդրում	մայիս 2016-հունիս 2016	8,712



	8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսչիկների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, քամեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2015 – դեկտեմբեր 2015	23,171
		հունվար 2016 - դեկտեմբեր 2016	5,538
		հունվար 2017 - հունիս 2017	11,585
	9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացման ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2015 – դեկտեմբեր 2015	18,509
		հունվար 2016 - հունիս 2016	11,840
	10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2015-դեկտեմբեր 2015	10,454
	11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումների ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	ապրիլ 2016-հունիս 2016	2,178
	12. Արենի, Նաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում	մայիս 2015 – դեկտեմբեր 2015	46,424
	13. Տաթև, Սվարանց և Տաճատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում)	մայիս 2015 – դեկտեմբեր 2015	12,643
	14. Նաչիկ համայնքին բրիկետավորման մեքենայի տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016	12,744
	15. Այլևտրաբնակային ապրելավիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղատնտեսական հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հունիս 2015-դեկտեմբեր 2015	46,065




	Վերջիններս պատկանելու են երեք համայնքների (Գնիշիկ, Նաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու են բացառապես անվճար հիմունքներով:		
	16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղատնտեսական հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016-մայիս 2016	13,417
	17. Այլևտրաբնակային ապրելավիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Նաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով:	սեպտեմբեր 2015-նոյեմբեր 2015	27,770
	18. Այլևտրաբնակային ապրելավիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով:	հունվար 2015 – դեկտեմբեր 2015	24,573
	19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կանավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016-մայիս 2016	13,417
	20. Այլևտրաբնակային ապրելավիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղատնտեսական հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մայիս 2015-ապրիլ 2016	54,450




	21. Գրասենյակի վարձավճար	2015 2016 2017	2624 2640 2200
	22. Գրասենյակի պահպանման ծախսեր	2015 2016 2017	1,184 1,200 1,000
	23. Ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր	2015 2016 2017	7,194 6,167 5,139
	24. Հեռահաղարդակցություն և կապի ծախսեր	2015 2016 2017	1,399 1,320 1,100
	25. Գործուղումներ	2015 2016 2017	3,166 2,713 2,261
	26. Աուդիտ	2015 2016 2017	2,000 3,500
	27. Օրագրի ղեկավարի աշխատավարձ	2015 2016 2017	744 744 744
	28. Հեռահաղարդակցություն և կապի պատասխանատու անձի աշխատավարձ	2015 2016 2017	667 667 667
	29. Օրագրի օգնականի աշխատավարձ	2015 2016 2017	7,400 7,400 7,400
	30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ	2015 2016 2017	1,600 1,600 1,600
	31. Օրագրի ադմինիստրատորի աշխատավարձ	2015 2016 2017	1,328 1,328 1,328





		Ընդամենը	494,021	
1 0.	Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Օրագրի բաղադրիչների գործողությունները, որոնք օրինականացվելու են պայմանագրերով (ծառայությունների վճարովի մատուցում, առքուվաճառք, էնթադրամաշնորհ)	Ժամկետներ	Արժույթը Եվրոյով
		1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հորոգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում	հունվար 2015 - հոկտեմբեր 2015	18,211
		2. հորոգտագործման պլանի մշակում	հոկտեմբեր 2015-դեկտեմբեր 2015	13,068
		3. «Մատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հունիս 2015 – դեկտեմբեր 2015	3,267
		4. «Մատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում	հուլիս 2015-սեպտեմբեր 2015	20,364
		5. Թիրախային համայնքներում արտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2016 – հոկտեմբեր 2016	11,549
		6. Տեղի հայտնի լինելի թվով լուսանկարային միջոցառումների իրականացում	նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2016	3,054
		7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մայիս 2016-հուլիս 2016	8,712
		8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, արագին օգնության պատագներ, թաքնված տեսահսկիչներ և այլն):	հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 հունվար 2016 - դեկտեմբեր 2016 հունվար 2017 – հունիս 2017	23,171 5,538 11,545



 	Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում		
	9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացման ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2015 – դեկտեմբեր 2015	18,509
	10. Տաթևի տարածաշրջանում գրոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	հուլիս 2015-դեկտեմբեր 2015	10,454
	11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունները մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	ապրիլ 2016-հունիս 2016	2,178
	12. Արենի, Խաչիկ, Մոզուլի թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունները մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում	մայիս 2015 – դեկտեմբեր 2015	46,424
	13. Տաթև, Սվարակ և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում)	մայիս 2015 – դեկտեմբեր 2015	11,643
	14. Խաչիկ համայնքի բրիկետավորման մեքենայի տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016	12,744
	15. Այլընտրանքային ապրելամիջոցների ներառվողությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Վերջիններս պատկանելու են երեք համայնքներին՝ «Գնիշիկ», «Խաչիկ» և «Արենի» կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու են բացառապես անվճար հիմունքներով:	հունիս 2015-դեկտեմբեր 2015	46,065



 	16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016-մայիս 2016	13,417
	17. Այլընտրանքային ապրելամիջոցների ներառվողությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքներին՝ «Գնիշիկ», «Խաչիկ» և «Արենի» կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով:	սեպտեմբեր 2015-նոյեմբեր 2015	27,770
	18. Այլընտրանքային ապրելամիջոցների ներառվողությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով:	հունվար 2015 – դեկտեմբեր 2015	24,573
	19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մարտ 2016-մայիս 2016	13,417
	20. Այլընտրանքային ապրելամիջոցների ներառվողությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում	մայիս 2015-ապրիլ 2016	54,450
	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը		



21. Գրասենյակի վարձավճար	2015 2016 2017	2624 2640 2200
22. Գրասենյակի պահպանման ծախսեր	2015 2016 2017	1,184 1,200 1,000
23. Ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր	2015 2016 2017	7,194 6,167 5,139
24. Հեռահաղարդակցություն և կապի ծախսեր	2015 2016 2017	1,399 1,320 1,100
25. Գործողումներ	2015 2016 2017	3,166 2,713 2,261
26. Աուդիտ	2015 2016 2017	2,000 3,500
27. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ	2015 2016 2017	744 744 744
28. Հեռահաղարդակցություն և կապի պատասխանատու անձի աշխատավարձ	2015 2016 2017	667 667 667
29. Ծրագրի օգնականի աշխատավարձ	2015 2016 2017	7,400 7,400 7,400
30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ	2015 2016 2017	1,600 1,600 1,600
Ծրագրի տնօրինչի աշխատավարձ	2015 2016 2017	1,328 1,328 1,328




Handwritten signature

Ընդամենը



494,021

1. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ժամկետներ	Արժույթը Եվրոյով
1. Գրասենյակի վարձավճար	2015 2016 2017	2624 2640 2200
2. Գրասենյակի պահպանման ծախսեր	2015 2016 2017	1,184 1,200 1,000
3. Ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր	2015 2016 2017	7,194 6,167 5,139
4. Հեռահաղարդակցություն և կապի ծախսեր	2015 2016 2017	1,399 1,320 1,100
5. Գործողումներ	2015 2016 2017	3,166 2,713 2,261
6. Աուդիտ	2015 2016 2017	2,000 3,500
7. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ	2015 2016 2017	744 744 744
8. Հեռահաղարդակցություն և կապի պատասխանատու անձի աշխատավարձ	2015 2016 2017	667 667 667
9. Ծրագրի օգնականի աշխատավարձ	2015 2016 2017	7,400 7,400 7,400



Handwritten signature



Կարեն Մանվելյան

5



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 931 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1071-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 07/80-2/19555-15 և հուլիսի 27-ի
N 06/18-4/19824-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախա-
րարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համար ձեռք բերված բեռը՝
ուսումնագիտական լաբորատոր սարքեր՝ իրենց բաղադրամասերով (3 տեղ, 76LBS
(34.47 կգ) ընդհանուր քաշով, 8,672 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր
արժեքով՝ որից փոխադրման ծախսերը կազմել են 1,195, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծվում է
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետու-
թյան կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ կրթության և
գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի» և «Լույս» մշակութային, գիտական, կրթա-
կան հիմնադրամի համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-1071-Ա որոշմամբ (Հայաս-
տանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-244-Ա որոշման խմբագրությամբ) հաս-
տատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարու-
թյուն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**28 օգոստոսի 2015 թվականի N Մ- 932 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1071-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության
«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ) (1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2015 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/20683-15 և օգոստոսի 4-ի
N 03/5-1/20659-15 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախա-
րարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի համար ձեռք բերված բեռը՝
գիտաուսումնական սարքեր՝ իրենց բաղադրամասերով (7 տեղ, 42 կգ ընդհանուր քաշով,
13,162.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, «Չվարթնոց» ՄՏ)
ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-
գրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական հա-
մալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող
«ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի և «Լույս» մշակութային,
գիտական, կրթական հիմնադրամի համագործակցություն» ծրագրի մասին» N Մ-1071-Ա
որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-244-Ա որոշման խմբա-
գրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարու-
թյուն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
28 օգոստոսի 2015 թվականի N Մ-933 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 5-ի N 07/80-2/20850-15 և օգոստոսի 4-ի N 03/5-1/20713-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 4-ի N ԱՄ/22.2/9076-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության կողմից ուղարկված Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ 64 արկղ, 538 կգ քաշով, 64,403.95 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,795.87 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:


2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



№	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Իրոպրոֆեն, 400մգ, դիտ.	2000	22.80
2	Լինեդոլիդ, 600մգ, կազապարով դիտ.	1760	10252.00
3	Պատրեսոն, 20մգ, դիտ.	450	48.90
4	Ներարիկ, միանգամյա օգտագործման, Լուեր LOCK, 50մլ	100	57.49
5	Իզոնիազոլ, 300մգ, դիտ. դիսկետ	1000	27.90
3	Ռիբավիրին, 800մգ, դիտ. դիսկետ	6600	774.18
4	Բմիալեք, 500մգ / Սիտադոլին, 50մգ, շիշ, փոշի, ներառվում	10620	49510.44
5	Բեդազուրիլ, 100մգ, դեղամաք	752	3710.24
ԸՆԴԱՄԱՆՈՒՄ			64403.95





